ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"6" նոյեմբերի 2012թ № 139-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ժբ/ ենթակետով և համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ հունիսի 2-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին>> N 102 հրամանի **որոշում եմ՝**

1. Մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով մարզպետարանի ենթակայության կազմակերպություններում 2012թ. նոյեմբերի 7-ից անցկացնել գույքագրում:
2. Կազմակերպությունների տնօրեններին՝ գույքագրումն անցկացնել համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հրամանով հաստատված կարգի:
3. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը և իրավաբանական բաժնին՝ գույքագրման գործընթացի իրականացման աշխատանքներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն:
4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 6
ք. Կապան